ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՆԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/15 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
10	«ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ	«ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ	«ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ	«ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ	«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալը (այսուհետ՝ մեդալ) բաղկացած է 2 մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված սկավառակից: Սկավառակի տրամագիծը 28 մմ է, հաստությունը՝ 3 մմ: Սկավառակը պատրաստված է արծաթագույն մետաղից (32,0 գր), կենտրոնում նույն մետաղի համաձուլվածքից պատկերված է 36 մմ տրամագծով՝ արիության խորհրդանիշ խաչաձև պատկեր, որի կողմերը դրսի մասում ունեն 14 մմ լայնություն, իսկ դեպի

						կենտրոն՝ 5 մմ կորություն: Խաչաձև պատկերի կողմերը 4 մմ հավասարապես դուրս են բերված սկավառակի տրամագծից և դեպի դուրս ունեն 45 աստիճանի թեքություն: Խաչաձև պատկերի կողմերը պատված են մուգ կապույտ արծնով և ունեն 1,5 մմ լայնության արծաթափայլ եզրաշերտ: Խաչաձև պատկերի կենտրոնական մասում պատկերված է 12 մմ տրամագծով շրջան՝ 1 մմ եզրաշերտով: Շրջանի եզրագծից 1 մմ դեպի կենտրոն ամբողջ ծավալով պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանի ոսկեփայլ ցայտաքանդակը: Խաչաձև պատկերի կողմերի միջնամասում՝ սկավառակի վրա պատկերված է հավասարակողմ եռանկյուն, որի կողմի երկարությունը 8 մմ է, իսկ հաստությունը՝ 1,5 մմ: Եռանկյան դրսի կողմը 2 մմ դուրս է բերված սկավառակի տրամագծից և ունի ուռուցիկ տեսք: Մեդալի դարձերեսին՝ 5 զուգահեռ տողով, ուռուցիկ տառերով գրված են «ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2-ՐԴ

						ԱՍՏԻՃԱՆ» բառերը: Մեդալը դարձերեսի կողմից համարակալված է: Կախիչը պատրաստված է թեթև մետաղից և ունի հնգակողմ բազմանկյան ձև, որը պաստառապատված է 24 մմ լայնության մուգ կարմիր մետաքսե (մուարե) ժապավենով: Կախիչի աջ և ձախ կողմերի բարձրությունը 39 մմ է: Կախիչի վերևի մասի երկարությունը 27 մմ է, ներքևինը՝ 47 մմ, հաստությունը՝ 1 մմ: Կախիչի վերևի մասի երկարությունը կենտրոնից մինչև ներքևի գագաթը 50 մմ է: Կախիչի դարձերեսին ամրացված է գնդասեղ: Ժապավենի կենտրոնով՝ վերից վար անցնում է 4 մմ լայնություն ունեցող մուգ կապույտ 2 շերտագիծ, որոնք իրարից անջատված են 2 մմ հեռավորությամբ: Մեդալի շերտաձողիկի չափերն են՝ 25 մմ x 12 մմ: Շերտաձողիկի ժապավենն ունի մեդալի ժապավենի գունային նկարագիրը: Մեդալները պետք է համապատասխանեն «Պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» ՀՀ օրենքով սահմանված նկարագրություններին

					և նմուշներին, լինեն մաքուր, առանց քերծվածքների կամ այլ հետքերի, դարձերեսի կողմից համարակալված (հերթական համարները կտրամադրվի) և փաթեթավորված: Միատեսակ մեդալները չպետք է տարբերվեն միմյանցից (չափերի տարբերությունը՝ ոչ ավել քան 0.1 մմ): Վերը նշված քաշերի թույլատրելի շեղումը՝ +/- 2%:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՆԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/15 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
10					